

Արձանագրություն №10/2020-2021

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ **2021թ. մայիսի 20**-ին տեղի ունեցած արտահերթ (առցանց) նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 19-ը (տասնըհինը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գեղամ Գևորգյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը բացելով գիտական խորհրդի արտահերթ նիստը՝ նշեց, որ օրակարգում ընդգրկված էր ԵՊՀ հոգաբարձուների խորհրդում պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների ընտրության մասին հարցը: ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից հոգաբարձուների խորհրդի անդամության որևէ թեկնածու չի առաջադրվել, ֆիզիկայի ֆակուլտետի կողմից պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներից հոգաբարձուների խորհրդի անդամության թեկնածու առաջադրված ներկայացուցիչը ինքնաբացարկ է հայտնել՝ հրաժարվելով իր թեկնածությունից:

Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը հայտարարեց քվեակազմի բացակայության, օրակարգի հարցով թեկնածուներ չառաջադրվելու մասին և արտահերթ նիստը չկայացավ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ.Ս. Հովսեփյան

20.05.2021թ.